ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 23» նոյեմբերի 2015 թվականի N 24-Ն

ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, 34-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9, 10, 11 հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով

համայնքի ավագանին որոշում է՝

Դվին համայնքի տարածքում 2016 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ *7500* դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *15.000* դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *25.000* դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *35. 000* դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *50.000* դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *1500* դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ *2500* դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է *2500* դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ *2500* դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ *2500* դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար *350* դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է *150.000* դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է *30.000* դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ *1000* դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ *500* դրամ.

5^1. համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար՝ *50.000* դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ *25 000* դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ *50 000* դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ *200 000* դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ *500 000* դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ *250 000* դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ *100 000* դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ *2000* դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ԴՎԻՆ համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100.000 դրամ:

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ:

11. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման վճար՝ յուրաքանչյուր մասնակցի համար՝ 2000 դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝ 0 դրամ:

Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր:

Ընթացիկ տարվա համար տեղական տուրքի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Տեղական տուրքերը և վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016թ. հունվարի 1-ից:

Որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Դվին համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 17-Ն որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Գ.Բարեղամյան			
Գ.Կիրակոսյան			
Հ.Նազարյան			
Կ.Դավթյան			
Ա.Գրիգորյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Աբրահամյան

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

N

ՈՐՈՇՈՒՄ

« 23» նոյեմբերի 2015 թվականի N 25

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ 3 ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հարապետության օր.ենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետով և հաշվի առնելով "Դվին համայնքի մանկապարտեզ" ՀՈԱԿ-ի տնօրեն Զ. Հակոբյանի միջնորդությունը

համայնքի ավագանին որոշում է՝

Դվին համայնքի բնակիչներ, սոցիալապես անպահով ընտանիքների երեխաներ՝ Դավիթ Արմենի Ռուստամյանին /ծնվ 2010 թ./, Գարեգին Վարդգեսի Մարգարյանին /ծնվ. 2010 թ./ և Յուլիա Յուրիկի Ասատրյանին /ծնվ. 2011 թ./ ազատել 2016 թվականի ծնողական վճարներից՝ ամբողջությամբ:

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Գ.Բարեղամյան			
Գ.Կիրակոսյան			
Հ.Նազարյան			
Կ.Դավթյան			
Ա Գրիգորյան			

Համայնքի ղեկավար՝ Ա.Աբրահամյան

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

N

ՈՐՈՇՈՒՄ

« 23» նոյեմբերի 2015 թվականի N 26

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԵՆԹԱԿԱ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել գյուղապետարանի և մանկապատեզի հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցները 26785444 /քսանվեց միլիոն յոթ հարյուր ութանասունհինգ հազար չորս հարյուր քառասունչորս /դրամ, գրադարանինը՝ 132490 /հարյուր երեսուներկու հազար չորս հարյուր իննսուն /դրամ:

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Հ.Նազարյան			
Գ.Բարեղամյան			
Գ.Կիրակոսյան			
Կ.Դավթյան			
Ա.Գրիգորյան			

Համայնքի ղեկավար՝ *Ա.Աբրահամյան*

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

N

ՈՐՈՇՈՒՄ

« 23» նոյեմբերի 2015 թվականի N 27

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թվականի հունիսի 22-ի N822-Ն որոշմամբ.

համայնքի ավագանին որոշում է՝

Դվին համայնքի բնակիչներին տրամադրել հողի հարկի արտոնություններ՝համաձայն նրանց ներկայացրած դիմումների.

1. *Ամիրխանյան Արմեն 25000դրամ*

2. *Գրիգորյան Ստեփան 32200դրամ*

Համայնքի ավագանու անդամներ	*Կողմ՝*	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Գ.Բարեղամյան			
Ա.Գրիգորյան			
Կ.Դավթյան			
Գ.Կիրակոսյան			
Հ.Նազարյան			

Համայնքի ղեկավար՝ *Ա.Աբրահամյան*